



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին
ատյանի (վարչական) դատարանի
վճիռ թիվ 0046/05/2010թ.
Նախագահող դատավոր՝ Կ.Բեգլարյան

Վարչական գործ թիվ 0046/05/2010թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«29» հունիսի 2010թ.

ք. Ստեփանակերտ

ԼՂՀ Գերագույն դատարանը վճռաբեկության կարգով՝ կազմով.

նախագահությամբ դատավոր՝ Գ. Հարությունյանի
դատավորներ՝ Ի. Կարապետյանի
Շ. Օհանյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Գրիշա Վազգենի Հայրումյանի ընդդեմ Գուրգեն Մուրենի Բարսեղյանի, Ասկերանի շրջանի Իվանյան համայնքի, ԼՂՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Ասկերանի տարածքային ստորաբաժանման՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին վարչական գործով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի (վարչական) դատարանի 2010թ. ապրիլի 30-ի վճռի դեմ բերված պատասխանող Գուրգեն Բարսեղյանի ներկայացուցիչ Արտյուշա Մադաթյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Հայցվոր Գրիշա Վազգենի Հայրումյանը հայց է ներկայացրել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ վարչական դատարան) ընդդեմ Գուրգեն Մուրենի Բարսեղյանի, Ասկերանի շրջանի Իվանյան համայնքի, ԼՂՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ

Ասկերանի տարածքային ստորաբաժանման՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Վարչական դատարանի 2010թ. ապրիլի 30-ի վճռով Գրիշա Վազգենի Հայրումյանի հայցապահանջը բավարարվել է մասնակի. վճռվել է Գրիշա Վազգենի Հայրումյանի կողմից փաստացի զբաղեցրած (օգտագործվող) մասով անվավեր ճանաչել ԼՂՀ Ասկերանի շրջանի Իվանյան գյուղի բնակելի տան նկատմամբ Իվանյան համայնքի 18.04.2005թ. թիվ 05 «ա» որոշման և 12.12.2006թ. շինարարության թույլտվության հիման վրա ԼՂՀ ԱԳԿ ՊԿ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-4 մատյանի 042129 համարի տակ 2007թ. հունվարի 5-ին կատարած Գուրգեն Սուրենի Բարսեղյանի իրավունքների պետական գրանցումը, հայցը մնացած մասով՝ մերժել:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել պատասխանող Գուրգեն Բարսեղյանի ներկայացուցիչ Արտյուշա Մաղաթյանը:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոքը բերվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքով:

1. Բողոք բերողի կարծիքով, դատարանը ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 72-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի պահանջների հիման վրա պետք է կիրառեր 53-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 6-րդ մասերի ու 78-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումները պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Հայցվորը դեռևս 2008 թվականին է իմացել պատասխանողի սեփականության իրավունքի գրանցման մասին, հետևաբար նրա կողմից բաց է թողնվել հայց ներկայացնելու համար երկամսյա ժամկետը և նա չի միջնորդել այդ ժամկետը վերականգնելու համար:

Այսինքն՝ դատարանը անտեսել է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի պահանջներն այն մասին, որ դատավարական ժամկետների ավարտից հետո գործին մասնակցող անձինք կորցնում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը, ինչպես նաև ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները, բողոքները և այլ փաստաթղթերը դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը:

2. Հայցադիմումը ներկայացվել է ակնհայտորեն դրա իրավունքը չունեցող անձի կողմից, հետևաբար գործի վարույթը ենթակա է կարճման:

Նշված պնդումը բողոք բերած անձը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

Համաձայն ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել ԼՂՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները:

Իսկ նույն օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետը պարտադիր կերպով սահմանում է, որ հայցադիմումին պետք է կցվեն պահանջի իրավական հիմքերը հավաստող փաստաթղթերը:

Մինչդեռ, հայցվորի սեփականության իրավունքը վիճարկվող հողատարածքի նկատմամբ գրանցված չէ, հայցվոր կողմը, հակառակ վերոհիշյալ հոդվածի պահանջների, հայցադիմումին չի կցել իր պահանջի իրավական հիմքերը հիմնավորող ոչ մի փաստաթուղթ, կցել է միայն իր և «Իվանյան» համայնքի ղեկավարի միջև կնքված պայմանագիրը, որի գնումից պարզվել է, որ այն կնքվել է ոչ թե 2005թ. հունվար ամսին, ինչպես նշված է հայցադիմումում, այլ 2006թ. հունվարի 5-ին, այսինքն՝ ավելի ուշ, քան Գուրգեն Բարսեղյանի հետ կնքված պայմանագիրը:

Դատարանը անտեսել է, որ վիճելի հողամասը հայցվորին հատկացվել է ոչ թե սեփականության, այլ վարձակալության իրավունքով և այն նրա սեփականությանը պետք է հանձնվեր միայն առանձնատունը երեք տարվա ընթացքում վերականգնելուց հետո:

Դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ պատասխանողի իրավունքի գրանցման արդյունքում հայցվորի որևէ իրավունք չի խախտվել, քանի որ նա հողի և առանձնատան սեփականատեր չի հանդիսանում, իսկ հատկացված 2000քառ.մետր հողատարածքը՝ ճշտված սահմանագծերով հայցվորին հանձնելու փաստը հավաստող որևէ ապացույց, ի խախտումն ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 25, 26-րդ հոդվածների պահանջների, հայցվոր կողմը դատարան չի ներկայացրել:

3.Բողոք բերող անձը գտնում է, որ դատարանը ճիշտ գնահատական չի տվել գործում առկա ապացույցներին և խախտել է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ, 23-րդ և ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածների պահանջները , այն է՝ յուրաքանչյուր ապացույց չի գնահատել գործում եղած բոլոր ապացույցների լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Բողոք բերողը խնդրել է բեկանել 2010թ. ապրիլի 30-ի վարչական գործով կայացված վճիռը և կայացնել նոր դատական ակտ՝ գործի վարույթը կարճելու մասին:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Իվանյան համայնքում կիսակառույց տուն կամ տնամերձ հատկացնելու, անհատական միջոցներով վերականգնելու, կառուցելու մասին» 14.05.2005թ. և 5.01.2006թ. համայնքի և կողմերի միջև կնքված պայմանագրերի համաձայն՝ Գ.Բարսեղյանին հատկացվել է 1500 քառ.մետր հողամաս, իսկ հայցվոր Գ.Հայրումյանին՝ 2000 քառ.մետր:

2. Ասկերանի շրջանի համայնքի 18.04.2005թ. թիվ 05«ա» որոշման և 12.12.2006թ. շինարարության թույլտվության հիման վրա ԼՂՀ ԱԳԿ ՊԿ Ասկերանի տարածքային ստորաբաժանման գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-4 մատյանի 042129 համարի տակ 2007թ. հունվարի 5-ին կատարվել է Գ.Բարսեղյանի իրավունքների պետական գրանցում բնակելի տան, հողամասի և ջրավազանի նկատմամբ:

3. Գործում բացակայում են տվյալներ վերը նշված հողամասերը Հողային օրենսգրքով նախատեսված կարգով տրամադրելու վերաբերյալ, հայցվորին հատկացված հողամասի սահմանները տեղանքում և քարտեզի վրա որոշված չեն:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վերանայելով վարչական դատարանի վճիռը վճռաբեկ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում, Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքը՝ դատարանի վճիռը բեկանելու մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի համաձայն, դատարանը սույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը...

Նույն օրենսգրքի 24-րդ հոդվածը սահմանում է, որ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Օրենսգրքի 6-րդ հոդվածը դատարանին հնարավորություն է ընձեռում վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով, չսահմանափակվելով վարչական դատավարության մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկելու ողջամիտ միջոցներ, մասնավորապես պահանջելու վարչական վարույթի նյութեր, տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ...

Մինչդեռ, վարչական դատարանը, ի խախտումն վերը նշված հոդվածների պահանջների, սույն գործով բազմակողմանի քննություն չի կատարել, ինչը հանգեցրել է չհիմնավորված վճռի կայացմանը, իսկ ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 112-րդ, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածների համաձայն, դատարանի վճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված: Այսինքն, դատարանը պարտավոր է տալ վճռի իրավական և փաստական հիմնավորումները:

Վճռի իրավական հիմնավորումը հաստատված փաստերի և իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի համապատասխան նորմի կամ նորմերի ընտրությունը և կիրառումն է, այն նորմերի, որոնց հիման վրա դատարանը եզրակացություն է անում վիճելի իրավահարաբերության առկայության կամ բացակայության մասին:

Գործի նյութերից հետևում է, որ ներկայացնելով հայցադիմում՝ հայցվորը չի հստակեցրել իր պահանջը Իվանյան համայնքի նկատմամբ, թեկուզև համայնքը ներգրավված է որպես պատասխանող կողմ, ճիշտ չէ նշել պատասխանող՝ կադաստրի մարմնի անվանումը, չի ստուգել նրա պատշաճ պատասխանող լինելու հանգամանքը: Դատարանը, բավարարվելով պատասխանող Գ.Բարսեղյանի անվամբ գրանցված տան և տնամերձ հողամասի կադաստրային գործում (որը դատաքննության ընթացքում չի հետազոտվել) առկա համայնքի տարածքում տնամերձ հողամաս հատկացնելու մասին Իվանյան համայնքի 18.04.2005թ. որոշմամբ, այն չի կցել գործի նյութերին և դրան պատշաճ գնահատական չի տվել, չի պարզել, թե հայցվորին հողամաս հատկացնելու վերաբերյալ համայնքի կողմից որևէ որոշում կայացվել է, թե ոչ, չի ճշտել կողմերին հատկացված հողամասերի սահմանագծերը և փաստացի զբաղեցրած հողամասերի չափը:

Ինչ վերաբերում է հայցվորի կողմից հայց ներկայացնելու համար ժամկետը բաց թողնելու մասին բողոքի փաստարկին, ապա այն անհիմն է, քանի որ բողոք բերողն որևէ ապացույց չի ներկայացրել այն մասին, որ հայցվորը դեռևս 2008 թվականին է իմացել իր իրավունքների խախտման մասին, մինչդեռ գործով պարզված է, որ նա 2010թ. փետրվար ամսին դիմելով իրավասու մարմիններին՝ զբաղեցրած հողամասի վերաբերյալ իրավունքների գրանցման հարցով, իմացել է, որ հողատարածքի մի մասի վերաբերյալ արդեն իսկ գրանցված է պատասխանողի սեփականության իրավունքը: Իսկ ըստ գործող օրենսդրության, հայց ներկայացնելու ժամկետի ընթացքը սկսում է այն օրվանից, երբ անձն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքի խախտման մասին:

Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ վարչական դատարանի վճռի եզրափակիչ մասում բացակայում է նշում այն մասին, թե ինչի վերաբերյալ է (հողամաս, շինություն) անվավեր ճանաչվել Գ.Բարսեղյանի իրավունքների պետական գրանցումը:

Այսպիսով, վերը նշված հիմքերի առկայությունը Գերագույն դատարանը դիտում է բավարար՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի ուժով վարչական դատարանի սույն գործով կայացրած վճիռը բեկանելու և գործն նոր քննության ուղարկելու համար:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց`

1. Պատասխանող Գուրգեն Բարսեղյանի ներկայացուցիչ Արտյուշա Մադաթյանի վճռաբեկ բողոքը մասնակիորեն բավարարել: Բեկանել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստյանի (վարչական) դատարանի 2010թ. ապրիլի 30-ի վճիռը և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ`

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆԱՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ`

Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Շ. ՕՅԱՆՅԱՆ